

Թբիլիսիի Ա. Ս. Պուշկինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր **Արտաշես Մխիթարյանի** զեկուցումը նվիրված էր Սունդուկյանի պոետիկայի և ժամանակի ու տարածության հարցերի պարզաբանմանը: Վերլուծելով դրամատուրգի լավագույն ստեղծագործությունները, նա ընդգծեց, որ Սունդուկյանը չի տալիս դարաշրջանի ժամանակագրական պատմությունը, հերոսների կենսագրությունը նրանց տարիքային ամբողջ երկարությամբ, այլ ներկայացնում է հանգուցային մոմենտները՝ միահյուսված, անքակտելի: Սունդուկյանը թեման բացահայտեց ոչ թե մտահայեցողական եղանակով, այլ բխեցրեց կյանքի հանգամանքներից, քերեց ժողովրդին հասկանալի լեզու, պայմանավորված ժամանակով և տեղով, հերոսի հոգեբանությամբ ու խառնվածքով, քերեց նոր ժանրեր՝ կատակերգություն և դրամա, որոնք դրսևորեցին դարաշրջանի արտահայտելու ամենաճկուն և ամենմիասնականությունները:

Գարբիել Սունդուկյանը վրաց գրական-հասարակական մտքի գնահատմամբ» զեկուցման մեջ բանասիրական գիտությունների թեկնածու **Հր. Բալթաձյանն** ընդգծեց, որ եղբայր ժողովրդի թատրոնը ևս, շնորհիվ հաչ դրամատուրգի ստեղծագործությունների, ոտքի կանգնեց՝ ստանալով նոր թափ ու շունչ, նոր ուղղություն, հասարակական-քաղաքական նոր բովանդակություն: Սունդուկյանն իր պիեսներում պատկերել է XIX դարի երկրորդ կեսի Թիֆլիսն իր դյուրանքով ու գունագեղությամբ, եվրոպական ու արևելյան կենցաղի խառնուրդով, անկրկնելի նիստուկացով: Ահա ինչու նրա պիեսները մեծ հաջողությամբ բեմադրվում էին նաև վրացական բեմերում, իսկ յուրաքանչյուր ներկայացման առիթով վրաց գրական-հասարակական մըտքի ներկայացուցիչները մամուլում հանդես

էին գալիս քննադատությամբ, գնահատմամբ ու դրվատանքի խոսքերով: Դեռևս 1875 թ. «Պետա» կատակերգության վրացերեն առաջին բեմադրության առթիվ Սերգեյ Մեխակին բարձր և օբյեկտիվ գնահատական է տալիս պիեսին, այն համարելով գաղափարապես ու գեղարվեստորեն հագեցված, բեմի բոլոր պահանջները բավարարող երկ: Տարբեր առիթներով հաչ դրամատուրգի ստեղծագործությունների քննարկմամբ վրաց մամուլում հանդես են եկել Իլիա Շավճավաճեն, Ակակի Շերեթելին, Անտոն Փորցելաճեն, Վալերիան Գունիսն և այլ նշանավոր գրական ու թատերական գործիչներ:

— Հայ մեծ դրամատուրգը իր համարյա ողջ կյանքը անց է կացրել Թիֆլիսում, — իր ելույթում ասաց վրացական ՍՍՀ ԳԱ Ռուսթավելու անվան վրաց գրականության պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր պրոֆ. **Խոսեք Մեգրելիձեն**, — ասրելով քաղմագդ ու բազմալեզու Թիֆլիսում՝ Սունդուկյանը գրական-ստեղծագործական և անձնական սերտ հարաբերություններ էր պահպանում գրականության, արվեստի, գիտության ու մշակույթի գործիչների հետ: Ա. Շերեթելին 1876 թ. հանդես է գալիս Միքայելի դերում («Էլի մեկ գոհ»), 1881 և 1901 թթ. մամուլում տպագրում է գրախոսություններ, որոնցում գնահատում է դրամատուրգի երկերը, 1912 թ. հրատարակում է մի գեղեցիկ հուշ, որը ընթերցողին հաղորդակից է դարձնում Սունդուկյանի բանաստեղծական խոնջրվածքին ու բնության նկատմամբ տածած պաշտամունքին: Բայց ավելի քան խոսուն են նրա՝ իր «մեծ եղբորը» նվիրած երեք ներբողները, որոնք նաև հիմն են հաչ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամության, համերաշխության ու եղբայրության:

Հ.Ր. ՍՄԱՆՅԱՆ

## «ՉԱՐԵՆՑՅԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ» ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՆՈՐԱՆԸ

Երևանի պետական համալսարանի սովետահայ գրականության ամբիոնի նախաձեռնությամբ արդեն մի քանի տարի է, ինչ պարբերաբար կազմակերպվում է ավանդական դարձած «Չարենցյան ընթերցումներ» գիտական նստաշրջան: Նախորդ երկու նըստաշրջաններում կարդացված զեկուցումները արդեն հրապարակված են երկու ժողովածուներով: Երրորդ նստաշրջանը կայացավ մայիսի 24-ին և 25-ին համալսարանի գիտական նիստերի դահլիճում:

«Վեցույթյան փիլիսոփայությունը «Գիրք ճանապարհի» գրքում» թեմայով զեկուցեց պրոֆ. **Ս. Աղաբաբյանը**: Մեր դարաշրջանի մեծ բանաստեղծ կյանքի էություն և պարզացման օրինակափությունների խորքը թափանցելու հազվագյուտ կարողություն է դըրսևորել «Ռուբայաթներ» և «Տաղեր ու խորհուրդներ» բանաստեղծական շարքերում, ասաց նա: Իր առջև դրված գեղագիտական խնդիրները լուծելիս Չարենցը խորամուխ էր լինում դասական գրականության ավանդների

մեջ և նեցուկներ էր գտնում Գյոթեի նշանավոր հիմներում, իսկ ոճական արահայտչական միջոցներ ընտրելիս նրան օգնության էին գալիս միջնադարի հայ տաղերգուները:

Զարեհի ստեղծագործական բարդ, հստակ հակասական աշխարհը ճանաչելու առումով կարևոր է նաև նրա քնարերգության մեջ սիրո թեմայի գեղարվեստական ձարմնավորման ուսումնասիրությունը: Բանասիրության թեկնածու **Ժ. Բալանթարյանը** նկատեց, որ սիրո թեման թեև Զարեհի ստեղծագործության էական կողմերից չէ, սկստամենայնիվ այս բնագավառում ևս նա ստեղծել է գեղարվեստական կատարելության հասած երկեր: Սիրային բանաստեղծություններում արտահայտված կարոտի ու երազանքի, վայելքների ու հիասլոպիության տարբեր երևելումները պայմանավորված են բանաստեղծի անհատական խառնվածքով, ապրած բուն կյանքով: Սիրո իդեալի որոնումը Զարեհի մոտ ընթացել է բարդ ու հակասական ճանապարհով, զիգագներով ու սխալներով, գշտներով ու սայթաքումներով: Զարեհի առաջին՝ «Երեք երգ տխրադալույս աղջրկան» ժողովածուի, «Տեսիլաժամեր», «Ծիածան», «Տաղարան» շարքերի, «Իմ ման սև սեր», «Ասպետական», «Նավգիլե» պոեմների հանգամանակից վերլուծությամբ զեկուցող ցույց տվեց բանաստեղծի վերաբերման ու վայրէջքները:

Բանասիրության թեկնածու **Կ. Աղաբեկյանի** զեկուցումը նվիրված էր «Երկիր Նաիրի» վեպին: Զարեհի այս երկը որակելով իբրև երգիծական-քաղաքական վեպ, զեկուցողը միաժամանակ ընդգծեց վեպի ողբերգական կողմը: Մեր ժողովրդի պատմության ամենողբերգական շրջանի սկանառեղ իր առջև գեղարվեստական խնդիր էր դրել լուծելու հայրենիքի, նրա քաղաքական բախտի հետ կապված հարցեր և պարտավոր էր պատասխանել «ի՞նչ ենք եղել երեկ և ի՞նչ պիտի լինենք վաղը» հրամայական դարձած հարցին: Այս նպատակով Զարեհը պետք է իր և ընթերցողի համար պարզեր, թե որոնք են ժողովրդի քաղաքական ձգտումների կործանման պատճառները: Անհրաժեշտ էր պատմության նորովի ընկալում, գաղտփարենքի վերանայում ու ճշտում: Այնուհետև զեկուցողը խոսեց «Երկիր Նաիրի» վեպի և Ա. Բակունցի, Ծ. Ծախնուրի ու Գ. Մահարու ստեղծագործությունների գեղարվեստական սոցիոլոգիայի շուրջը:

Պրոֆ. **Հր. Թամրազյանը** վերլուծության եկեղծարկեց Զարեհի «Տաղեր և խորհուրդներ» շարքը: Նա հատկապես կանգ առավ Զարեհի ստեղծագործության թեմատիկ ու ո-

ճական լայն ընդգրկումների, նրա ազգային ակունքների ու համաշխարհային մշակույթի հետ ունեցած աղերսների, «Գիրք ճանապարհի» ժողովածուի ստեղծման շրջանում գրականագիտության ու պատմագիտության մեջ տիրող ձախ մոլորությունների և այլ հարցերի վրա: Տաղերի ու խորհուրդների, մասնավորապես «Յոթ խորհուրդ գալիքի սերմնացուներին» քանաստեղծության վերլուծությանց գրականագետը բացահայտեց ժողովրդի անցյալի ու ապագայի նկատմամբ բանաստեղծի մտահոգությունները: «Յոթ խորհուրդ» մի իմաստակց գրույց է երկրի ու ժողովրդի անցյալի, ներկայի ու գալիքի մասին:

Դոց. **Գ. Անանյանը** նորահայտ փաստերի հիման վրա ճշտումներ կատարեց Զարեհի 1915—1916 թթ. կենսագրության վերաբերյալ: Այդ տարիներին Զարեհը եղել է հայկական կամավորական բանակի զինվոր և կոպել է իր «կապտառաչա հայրենիքի» փրկության համար: 6-րդ կամավորական բանակում նա սկզբում եղել է սանիտարական վաշտում երեք հոգուց կազմված «նոսրկայի» ղեկավար, հետո իր պահանջով մեկնել է կրակի առաջավոր գիծ: Զեկուցողը ճշտեց նաև Զարեհի՝ բանակում և պատերազմի տարբեր վայրերում գտնվելու փաստերը, նրա մասնակցությունը մարտական գործողություններին և այլ մանրամասներ, որոնք նոր լույս են սփռում Զարեհի այդ տարիների կենսագրության և գրական ստեղծագործության վրա:

«Ամբոխները խելագարված» պոեմի բանասպաշարի և պատկերային համակարգի մասին զեկուցեց դոց. **Հ. Հարությունյանը**: Պոեմը զանգվածների ամենակարող ուժը փառաբանող մի սաք է, գրական կատարյալ երկ ոչ միայն բովանդակությամբ, այլև պատկերավորման ամբողջական համակարգով, սասց նա: Ամբողջ պոեմը գունացին ու ձայնային պատկերների մի համանվագ է: Գունապատկերների արմատները հասնում են հեթանոսական առասպելական ժամանակներից (հիշենք «Վահագնի ծնունդը») մինչև 20-րդ դար, մասնավորապես Սիամոնթո: Պոեմին բնորոշ գույնը կարմիրն է, որը դարձավ հեղատիպության խորհրդանիշը: Զարեհի օգտագործած մոտ 490 բառերի շարքում զգալի տեղ ու կշիռ ունեն կարմիր ու կարմրություն արտահայտող բառերը՝ կարմիր, կարմրավառ, հրակարմիր, հրաբուռ, հրանըման, արյունավառ, արյունամած, արնագույն և այլն: Բազմաթիվ պատկերների առանցքային բառեր են դարձել արևն ու իրիկունը, վառելն ու կոպելը, կաշարանն ու դաշտը:

Չարեհի պոեմի պատկերային համա- ջական հատված-կատուցվածքների կադա- կարգում որոշակի դեր ունեն չափազանցու- պարների կրկնությունները: Նստաշրջանն ամփոփեց բանասիրական թյունները և հատկապես բառերի, կապակ- ցությունների, նախադասությունների, ամբող- ֆակուլտետի դեկան պրոֆ. Մ. Մկրյանը:

Ս. ՄՈՒՐԱԿՅԱՆ